**Շրջակա միջավայրի նախարարության**
**Գլխավոր քարտուղար պարոն Գ.Գույանին**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**
Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ):

**2. Գործուղման վայրը  Ժամկետները**
Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն, քաղաք Սկոպիե, 2023 թվականի հունիսի 19-20:

**3. Հրավիրող կողմը**
ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի (UNCCD) քարտուղարություն:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.
Մասնակցություն «Անապատացման դեմ պայքարի» միջազգային օրվան (հունիս 17) նվիրված միջտարածաշրջանային հանդիպմանը:

**5. Քննարկված թեմաները**
Հանդիպման թեմա էր ընտրված «Կանայք և հողերը, նրանց իրավունքները» կարգախոսը:

**6. Հանդիպումները, ելույթները.**
Աշխատաժողովին բացման խոսքով հանդես եկավ Հս. Մակեդոնիայի շրջակա միջավայրի և ֆիզիկական պլանավորման նախարարը, ողջունելով մասնակիցներին և ներկայացնելով հողերի վերականգնմանն ուղղված Հս. Մակեդոնիայի կառավարության ջանքերը:
Հայաստանը մինչեւ հաջորդ՝ 16-րդ կողմերի կոնֆերանս (COP_16) հանդիսանում է տարածաշրջանային նախագահող երկիր եւ ինձ վստահված էր վարել հանդիպման առաջին մասը: Ներկայացվեց Հայաստանում հողերի վերականգնման աշխատանքները լուսաբանող տեսահոլովակ: Մասնակից երկրների կոնվենցիայի ազգային համակարգողները ներկայացրեցին իրենց երկրներում կոնվենցիայի իրականացման հաջողված փորձը, ինչպես նաեւ առկա

մարտահրավերները՝ հողերի վերականգնման և աշխատանքներում կանանց ներգրավվածության համատեքստում: Հաշվի առնելով տարածաշրջանի կրոնական, ազգային, ինչպես նաև բնակլիմայական բազմազանությունը, խնդիրները տարբեր էին եւ բազմաբնույթ: Հանդիպումը ամփոփվեց դաշտային այցելությամբ Ոդնա լեռ, որը ամբողջությամբ լերկ լինելով ծառապատվել էր անտառտնկման լայնածավալ աշխատանքների շնորհիվ ավել քան 30 տարում, սակայն ներկայումս պատրաստի անտառում խոշոր ներդրումային ծրագրի գայթակղությանը տրվելով, ճանապարհներ են կառուցվել, ինչն էլ հանգեցրել է էրոզիոն երեւույթների ակտիվացմանը՝առաջացնելով լայնածավալ փլուզումներ:

**7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կարևորվեց նմանատիպ հանդիպումների անցկացումը, ինչը մեծապես կնպաստի տարածաշրջանային խնդիրների մատնանշմանը, փորձի փոխանակմանը եւ տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Տարածաշրջանային համակարգողների կողմից առաջարկներ եղան քարտուղարության ներկայացուցիչներին՝ նմանատիպ հանդիպումներ հաճախակի կազմակերպման հարցում օժանդակելու երկրներին:

Հս. Մակեդոնիաի նախարարությունը պատրաստակամություն հայտնեց հյուրընկալել տարծաշրջանային ազգային համակարգողներին հոկտեմբեր ամսին նախատեսված հողերի վերականգնման թեմայով աշխատաժողովին:

Գործուղվող՝ Նարինե Հակոբյան

6/28/2023